№ 152 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17 1900 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17 № 152

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զինված ժողովուրդ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կամքի ազատութեան հայ թէօրետիկները. Նամակ Բ-ից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործերը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այսպէս էր խօսում Զրադաշտը:

ԶԻՆՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ

—

Քիւրդերի համար բացված մի յատուկ զինուորական դպրոցից, որ կրում է աշիրաթական անունը եւ որտեղ բացառապէս սովորում են քիւրդ ազգապետների պատանիները, ահա երկրորդ տարին է, որ դուրս են գալիս զինուորական կրթութիւն ստացած քիւրդ զինուորականներ: Այս տարի ուսում աւարտեցին տասնեօթ հոգի և անմիջապէս ուղարկվեցին Փոքր Ասիա զինուորական ծառայութեան:

Քիւրդերին զինուորական ուսում տալը շարունակութիւն է զինուորական մի ընդարձակ ծրագրի իրագործութեան, որ մշակվում է տասն և հինգ տարիներից ի վեր: Քիւրդական ամբողջ տարրը, ինչպէս յայտնի է, ներկայանում է իբրև մի զինված ժողովուրդ, որ պատրաստ է ամեն մի րոպէ շարժվել իր տեղից և սպառազինված խմբեր կազմելով նետվել կռւի դաշտը: Քիւրդերը յայտնի են, իբրև լաւ ձի հեծնողներ և բաց օդի մէջ ապրելու դժուարութիւնները տանող մարդիկ՝ թէ ամառվայ շոգ և թէ ձմեռվայ ցուրտ եղանակներին: Այդ զինված և քիչով բաւականացող ազգը իր վրա դարձրեց նախ անգլիական, ապա գերմանական պատերազմագէտների ուշադրութիւնը և նրանք մի ծրագիր մշակեցին կազմակերպելու քիւրդերից հեծելազօրքի կանոնաւոր գնդեր:

Քիւրդերը իրանց նախնական դրութեան մէջ գործում են վայրենի հրոսակների ապաւորութիւն: Նրանց ընդհարումների գլխաւոր նպատակները են լինում աւարառութիւն և անզուսպ վրիժառութիւն: Այդպիսի վայրենի ոյժի վրա անկարելի էր հաստատ յոյսեր դնել և վստահանալ լուրջ պատերազմների ժամանակ, մինչդեռ մոցնելով քիւրդերի մէջ զինուորական համակարգված վարժութիւններ և կազմակերպելով կանոնաւոր գնդեր, կարելի է լինում այդ վայրենի և նոյն իսկ պետութեան համար վտանգաւոր և կառավարելու անյարմար տարրը դարձնել իբրև ամբողջ պետական զօրքի մի մասը, որ կարող է որոշ և ոչ աննշան դեր կատարել պատերազմների ժամանակ:

Քիւրդական գնդերը կազմվեցին և զինուորական վարժութիւնները շարունակվում են: Սակայն քիւրդ ազգաբնակութիւնը ոչ մի էական բարեփոխութիւն չէ տեսնում իր կեանքի մէջ: Աշիրաթներից շատերը սկսում են նեղվել տնտեսական ծանր հանգամանքներից: Վերջին տարիների հացի անբերրիութիւնը և անկարգ երկրագործական կենցաղավարութիւնը զրկանքներ պատճառեցին և քիւրդ ազգաբնակութեան, որ սեփական ցանքսեր չունի և ստիպված է հաց գնել հողագործներից, տալով նրա փոխարէն իր խաշնարածութեան արդիւնքները: Մի քանի տեղ պակասել են արօտները և քիւրդերը փորձեր են անում հերկելու իրանց հողերը՝ սեփական հաց ունենալու նպատակով: Քրդական տարրը հարուստ շեյխերի հետ միասին հանդէս է բերել քաղցած և զրկված մարդկանց մի մեծ բազմութիւն, որ իր կարօտութեան շնորհիւ սարկացել է և խաղալիք է դարձել ազգապետների ձեռքին:

Քիւրդական մասսան աղքատ է և անապահով: Նա կարող է զինվել նոր տեսակի զէնքերով և դառնալ զօրքի համար հարկաւոր մի ոյժ: Բայց բաւական չէ զինված ժողովուրդ լինել բարեկեցիկ և բաղդաւոր ապրելու համար: Անհրաժեշտ է կուլտուրական կեանքի շաւղի վրա ոտք կոխել: Իսկ ո՞վ կը հոգայ այդ անհրաժեշտութեան մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԹԷՕՐԵՏԻԿՆԵՐԸ

—

Դժբաղդ ժողովուրդ չենք, երբ մեզ համար դեռ վիճելի են ամենատարրական ճշմարտութիւնները: Այսպէս դեռ, ըստ երեւոյթին, վիճելի է մեզանում, թէ արդեօք բարոյական հրահանգները պէտք են մեր հասարակութեան այս կամ այն դասի, նոյն իսկ «ամենաինտելիգենտ» դասի, անհատների համար: Խնդիրը, թըւում է թէ, ինքն ըստ ինքեան պարզ է, բայց խօսելու սիրահարները շարունակում են փիլիսոփայութիւն անել:

Ահա, օրինակ, հոգեբանական դէտէրմինիզմի մի փաստաբան, պարոն Բ. Գ., որ «Մշակի» № 96-ի մի ընդարձակ յօդուածում («Անզօր քարոզներ») ուզում է «գիտական» նորութիւններ ասել: Յօդուածը, ըստ երեւոյթին, նպատակ ունի չօշափել այն էական հարցը, թէ ինչու արդեօք մեր ինտելիգենցիան գծուծ է, մասնապաշտ է, եւ ինչ միջոցներով կարելի է դարման անել չարիքին: Բայց այդ յօդուածը սկսում է... Ադամից: «...Գոյութեան կռիւն է, —ասում է պ. յօդուածագիրը,—որ ղեկավարում է ոչ միայն մարդկանց, այլ համայն տիեզերքը, սկսած Ադամից *) մինչեւ երկնային ահագին գնդերը, սկսած միասէլիւլ ամենահասարակ օրգանիզմներից անցնելով կենդանական ամբողջ աշխարհը, որի կատարելատիպը անում նա գիտութեան, ինչպէս առիւծը իր կերին: Աղքատութիւն է նա, եւ ցեխ, եւ ողորմելի հաճոյք:

Այն ժամանակ դուք ասում էք. «Ինչո՞ւմն է իմ առաքինութիւնը: Նա դեռ չէ ստիպել ինձ խենթութիւն անել: Ի՞նչպէս յոգնել եմ ես իմ բարիից եւ չարից: Այդ բոլորը՝ աղքատութիւն է, եւ ցեխ, եւ ողորմելի հաճոյք».

Այն ժամանակ դուք ասում էք. «Ինչո՞ւմն է իմ արդարադատութիւնը: Ես չեմ նկատում, որ ես բոց եւ կրակ լինէի: Իսկ արդարադատ մարդը՝ բոց է եւ կրակ»:

Այն ժամանակ դուք ասում էք. «Ինչո՞ւմն է իմ կարեկցութիւնը: Կարեկցութիւնը մի՞թէ խաչ չէ՞, որի վրա խաչում են նրան, ով սիրում է մարդկանց: Բայց իմ կարեկցութիւնը խաչելութիւն չէ»:

...Ձեր մեղքը չէ, որ բողոքում է երկնքին, այլ ձեր գոհութիւնը. ձեր մեղքերի չնչինութիւնն է բողոքում երկնքին:

Բայց ո՞ւր է այն կայծակը, որ անցնելու է ձեր միջով: Ո՞ւր է այն խենթութիւնը, որ պէտք է պատուաստել ձեզ:

Տեսէք, ես ձեզ վարդապետում եմ գերմարդու մասին. նա է այդ կայծակը, նա է այդ խենթութիւնը»: (Ժողովուրդը ծիծաղում է Զրադաշտի խօսքերի վրա եւ լարախաղացը սկսում է իր ներկայացումը):

IV

Զրադաշտը նայում էր ժողովրդի վրա եւ զարմանում: Յետոյ նա դիմեց նրան այսպիսի խօսքերով.

«Մարդս լար է, լար՝ անդունդի վրա:

Վտանգաւոր է սկիզբը, վտանգաւոր է ճանապարհը, վտանգաւոր է յետ նայել, վտանգաւոր է վախենալ եւ կանգ առնել:

Մարդուս մէջ կարեւոր է այն, որ նա կամուրջ է, ոչ թէ նպատակ, մարդուս մէջ կարելի է սիրել միայն այն, որ նա անցումն է եւ ոչնչացումն»:

. . . . . .

*) «Ադամից» տպագրական սխալ է այդտեղ. պ. Բ. Գ. գրած է եղել «առօմից»: Ե. Խ.

*) Նիցշէ էվոլիւցիոնիստ է: Նա ընդունում է Դարվինի թէօրիան, այսինքն, որ երկրիս երեսին այժմ ապրող կենդանիները աստիճանաբար զարգացել են ամենատոր, ամենատարրական կենդանական ձեւերից: Մարդուց էլ պէտք է առաջ գայ, Նիցշէի համոզմունքով, մի աւելի բարձր էակ, գերմարդ:

Ե. Ե.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅՍՊԷՍ ԷՐ ԽՕՍՈՒՄ ԶՐԱԴԱՇՏԸ

Ֆրիդրիխ Նիցշէ

—

„Also sprach Zarathustra“ Նիցշէի վերջին գրքոյկներից է և, կարելի է ասել, ամենաժողովրդականը: Հին մազդեզական կրօնի քարոզիչ Զրադաշտի բերանով խօսում է այդտեղ ինքը Նիցշէ: Զրադաշտի առասպելական անձնաւորութիւնը գրաւում էր Նիցշէին երեի այն պատճառով, որ նրա վարդապետութիւնը համակված է կենսուրախութեամբ եւ քարոզում է կռիւ յանուն իդէալի: Ինչպէս յայտնի է, հայոց հին հեթանոսական կրօնը շատ մօտ էր մազդեզականութեան:

Ցանկանալով, որ, որքան հնար է, ընթերցողը անմիջապէս ծանօթանայ Նիցշէի գաղափարների և ոճի հետ, մենք այստեղ քաղուածօրէն բերում ենք նրա գրուածքի ամենաէական կէտերը իր սեփական բառերով և միայն այնտեղ, որտեղ բնագիրը մութն է կամ որտեղ ոչ էական մասը պէտք էր կարճառօտ մէջ բերել էականը հասկանալի դարձնելու եւ գրուածքի կապը պահպանելու համար, մենք աւելացրել ենք խօսքեր և բառեր կամ վերարտադրել ենք ամբողջ հատուածներ ամփոփ կերպով մեր խօսքերով: Այն բոլորը, ինչ որ Նիցշէի բուն խօսքերը չեն, դրված են փակագծի մէջ:

—

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Զրադաշտի առաջաբանը

I

(Երեսուն տարեկան դառնալով, Զրադաշտը հեռացաւ սարերը: Տասս տարուց յետոյ նա թողեց սարերը եւ գնաց ժողովրդին քարոզելու):

...Մի առաւօտ նա վեր կացաւ լուսաբացին, կանգնեց արեգակի դիմացը եւ ասաց նրան այսպիսի խօսքեր.

«...Ես պէտք է իջնեմ ներքեւ, ինչպէս ասում ես դու ամեն երեկոյ, սուզվելով ծովի մէջ եւ տեղափոխելով լոյսդ աշխարհի միւս կողմը, դու, ամենաճոխը լուսաւորներից: Ես պէտք է քեզ նման մայր մտնեմ, ինչպէս ասում են այդ նրանք, որոնց մօտ ուզում եմ այժմ իջնել:

Ուրեմն օրհնիր ինձ դու, անդորր աչք, որ առանց նախանձի նայում ես նոյն իսկ մեծ բաղդաւորութեան վրա»:

Այդպէս սկսվեց Զրադաշտի արեւամուտը:

II

(Անտառում նա հանդիպեց մի ծեր ճգնաւորի, որ առաջուց ճանաչում էր նրան: Ծերունին ասաց). «...Այո, ճանաչում եմ, Զրադաշտն է: Պայծառ է նրա հայեացքը, եւ չը կայ արհամարհանք նրա երեսին, ուստի եւ նա քայլում է այնպէս, կարծես պարում է:

Զրադաշտը առաջվանը չէ, մանուկ է դարձել Զրադաշտը, այժմ նա զարթնում է: Ի՞նչ ես ուզում դու քնածներից...

Զրադաշտը պատասխանեց. «Ես սիրում եմ մարդկանց»...

(Ճգնաւորը ասաց Զրադաշտին). «Մի գնալ մարդկանց մօտ եւ մնայ անտառում»...

«Բայց ինչ անեմ անտառում, սուրբ մարդ», հարցրեց Զրադաշտը:

Սուրբը պատասխանեց. «Ես երգեր եմ յօրինում եւ երգում. երգեր յօրինելով, ես ինդում եմ, լալիս եւ երգում,—այդպէս ես փառաբանում եմ աստուածներին:

Երգով, լացով եւ ծիծաղով ես փառաբանում եմ աստուածներին»...

...Երբ Զրադաշտը մնաց մենակ, այսպէս խօսեց նա իր սրտում. «Հնարաւոր բան է՞ միթէ այդ: Այս սուրբ ծերունին դեռ չը գիտէ իր անտառում, որ աստուածները մեռել են»:

III

Գալով անտառի եռեւում գտնվող քաղաքը, Զրադաշտը գտաւ այնտեղ, շուկայի հրապարակում, ահագին բազմութիւն, որին զուարճալի տեսարան էին խոստացել—լարախաղ: Եւ Զրադաշտը դիմեց ժողովրդին այսպիսի խօսքերով.

«Բոլոր արարածները մինչեւ այժմ ստեղծել են մի բան, որ բարձր է եղել իրանցից *). իսկ դուք մի՞թէ ուզում էք այդ մեծ ալիքի տեղատուութիւնը լինել եւ գերադասում էք ետ դառնալ դէպի գազանները, քան յաղթել (ձեր մէջ) մարդուն, (գերազանցել մարդուց):

Ի՞նչ է կապիկը մարդուս համեմատութեամբ: Ծաղր կամ ցաւալի խայտառակութիւն:

Դուք անցել էք ճանապարհը որդից մինչեւ մարդ, բայց դեռ շատ բան է մնացել ձեզնում որդից: Մի ժամանակ դուք կապիկ էք եղել, եւ դեռ նոյն իսկ այժմ մարդս աւելի կապիկ է, քան շատ կապիկներ:

Մինչեւ անգամ ամենաիմաստունը ձեզնից՝ միմիայն աններդաշնակ, տատանվող ձեւ է մարմնի եւ ուրուականի մէջ (այսինքն անասուն է, բայց ձգտում է լինել ինչ որ երեւակայական, երկնային, սուրբ էակ,—մի բան որին դէմ է Նիցշէ): Բայց մի՞թէ ես պատուիրում եմ ձեզ լինել մարմին կամ ուրուական:

Ես աղաչում եմ ձեզ, եղբայրներ, հաւատարիմ լինել երկրին եւ չը հաւատալ նրանց, որոնք խօսում են ոչ երկրային յոյսերի մասին...

Նրանք (որոնք յորդորում են ճնշել, զրկել, չարչարել մարմինը հոգու փրկութեան համար) արհամարհում են կեանքը. նրանք մեռնող եւ իրանք իրանց թունաւորած մարդիկ են, որոնցից յոգնել է երկիրը,—թող կորչեն ուրեմն:

...Ի՞նչ է հապա այն վեսմը, որ դուք կարող էք զգալ: Այն՝ մեծ ինքնարհամարհանքի ժամն է,—այն ժամը, երբ զգուելի է դառնում ձեզ համար բաղդաւորութիւնը, եւ ձեր խելքը, եւ ձեր առաքինութիւնը (երբ հասկանում էք նրանց չնչինութիւնը եւ փափաք զգում աւելի բարձրի):

...Այն ժամանակ, դուք ասում էք. «Ինչո՞ւմն է իմ խելքը: Արդեօք հետաքրքիր է լինում նա գիտութեան, ինչպէս առիւծը իր կերին: Աղքատութիւն է նա, եւ ցեխ, եւ ողորմելի հաճոյք:

Այն ժամանակ դուք ասում էք. «Ինչո՞ւմն է իմ առաքինութիւնը: Նա դեռ չէ ստիպել ինձ խենթութիւն անել: Ի՞նչպէս յոգնել եմ ես իմ բարիից եւ չարից: Այդ բոլորը՝ աղքատութիւն է, եւ ցեխ, եւ ողորմելի հաճոյք».

Այն ժամանակ դուք ասում էք. «Ինչո՞ւմն է իմ արդարադատութիւնը: Ես չեմ նկատում, որ ես բոց եւ կրակ լինէի: Իսկ արդարադատ մարդը՝ բոց է եւ կրակ»:

Այն ժամանակ դուք ասում էք. «Ինչո՞ւմն է իմ կարեկցութիւնը: Կարեկցութիւնը մի՞թէ խաչ չէ՞, որի վրա խաչում են նրան, ով սիրում է մարդկանց: Բայց իմ կարեկցութիւնը խաչելութիւն չէ»:

...Ձեր մեղքը չէ, որ բողոքում է երկնքին, այլ ձեր գոհութիւնը. ձեր մեղքերի չնչինութիւնն է բողոքում երկնքին:

Բայց ո՞ւր է այն կայծակը, որ անցնելու է ձեր միջով: Ո՞ւր է այն խենթութիւնը, որ պէտք է պատուաստել ձեզ:

Տեսէք, ես ձեզ վարդապետում եմ գերմարդու մասին. նա է այդ կայծակը, նա է այդ խենթութիւնը»: (Ժողովուրդը ծիծաղում է Զրադաշտի խօսքերի վրա եւ լարախաղացը սկսում է իր ներկայացումը):

IV

Զրադաշտը նայում էր ժողովրդի վրա եւ զարմանում: Յետոյ նա դիմեց նրան այսպիսի խօսքերով.

«Մարդս լար է, լար՝ անդունդի վրա:

Վտանգաւոր է սկիզբը, վտանգաւոր է ճանապարհը, վտանգաւոր է յետ նայել, վտանգաւոր է վախենալ եւ կանգ առնել:

Մարդուս մէջ կարեւոր է այն, որ նա կամուրջ է, ոչ թէ նպատակ, մարդուս մէջ կարելի է սիրել միայն այն, որ նա անցումն է եւ ոչնչացումն»:

. . . . . .

քարոզների տեղ՝ նա տալիս է իր զօրաւոր խորհուրդները։ «Թողնենք—ասում է—զանազան հիպոթէզները, թողնենք մի կողմը իդէալական մտքերը եւ բարոյական քարոզները, աշխատենք քննել մեր կեանքը, տեղական պայմանները եւ բոլոր այն պատճառներն ու հարուածները, որոնք առաջացնում են յիշեալ չարիքները»։

Դարձեալ ուրեմն «դէտէրմինիզմ»։ Դարձեալ անհատը՝ ոչինչ, իսկ «պայմանները»՝ ամեն բան։ Բայց այդ ինչ դէտէրմինիզմ է։ Պ. յօդուածագիրը լսել է, որ աշխարհը կառավարվում է անողոք օրէնքներով, լսել է, որ մարդկային կամքը ենթարկվում է որոշ պատճառաբանութիւնների, որ նա արդիւնք է միջավայրի, «տեղական պայմանների» եւ այլն, որ նա ազատ չէ, ուստի եւ... «թողնենք իդէալական մտքերը», պաթեթիկաբար բացականչում է կամքի ազատութեան թէորեթիկը, հպարտ գիտակցութեամբ՝ որ մի բոլորովին նոր ու մի չատ աղդու հրահանգ է արձակում։ Իրաւ, որ նոր...

Թողնենք իդէալական մտքերը—նրանք անզօր են, անօգուտ։ Ժխտենք ուրեմն մամուլի եւ բոլոր կրթական հաստատութիւնների դերը։ Ժխտենք ընդհանրապէս կրթութեան նշանակութիւնը եւ խոնարհվենք միջավայրի, պատճառականութեան, ճակատագրական անհրաժեշտութեան առջեւ... Ահա թէ ուր են տանում գէտէրմինիզմի հայ փաստաբանի խօսքերը։ Գիտական դէտէրմինիզմը, ի հարկէ, ոչ մի առնչութիւն չունի այդ խօսքերի հետ. նա մեծ տեղ է տալիս կամքի յարաբերական ազատութեան, կրթութեան ու իդէալներին։ Նա ընդունում է, որ ամենաապականված անհատն անգամ որոշ շրջանի ու մտքերի ազդեցութեան տակ կարող է բարեփոխվել եւ ազնուանալ (խօսքը ա ն ի ա կ ն ե ր ի մասին չէ, ի հարկէ)։ Նա ընդունում է, որ գիւղացու կամ վաճառականի որդին կարող է լինել նոյնքան ազնիւ ու ինտելիգենտ, որքան բարոյախօս փիլիսոփայի որդին կարող է լինել սրիկայ։

Մամուլին, ուրեմն, իբրեւ գերագոյն կրթական հաստատութեան, լիազօրութիւն տանք մտրակելու անհատական ու մասսային մոլութիւնները եւ խրախուսելու, ուժեղացնելու իդէալական հոսանքը. մեր զարհուրելի իրականութեան մէջ դա է միակ ազդու եւ բանաւոր ճանապարհը... Ահա մի հոգեւորական, որ կաշառք է ուտում, բայց կարող է եւ չուտել։ Ահա մի վաճառական, մի միլիոնատէր, որ անանական եսականութեան մէջ կարծրացած, գարշում է հասարակական բարեգործութիւններից, բայց նա կարող է եւ բարեփոխվել ժամանակի ընթացքում ալարուիզմի քարոզներով եւ ուրիշների օրինակներով։ Ահա մի գրող, որ սիստեմաբար ոսնակոխ է անում խիղճը եւ ազնուութիւնը։ Ահա մի ուսանող, համալսարանական, որ հավալսարանի չէմքերն է միայն կոխոտել, բայց երբ խօսացնում էք, ամօթ ու պատկառանք կորցրած՝ վայելուն դատարկութիւնը «գիտականութեան» դիմակով ծածկում է եւ թութակօրէն սերտած ֆրազներով աջ ու ձախ ռմբակոծում է ունկնդիրներին։ Ահաւասիկ ինտելիգենտների ահագին խմբեր,—գիւղաք հէնց նաւթային մայրաքաղաքում,—որոնք կարող էին իրանց հասարակական բնազդներով մի քիչ թարմութիւն ներշնչել այդ մահացնող մթնոլորտում, բայց վատութեամբ կամ—աւելի յաճախ—մեղկութեամբ իրանց ժամանակը սպանում են թղթախաղի եւ ուրիշ մոլութիւնների մէջ։ Նրանք «կարիերիստ են, հասարակական գործերով չեն հետաքրքրվում, մինչեւ անգամ նրանց մէջ գողութեամբ պարապողներ էլ կան»—այսպէս է ասում ինքը նոյն պ. յօդուածագիրը։ Եւ այսքանը յիշեցնելուց յետոյ է, որ նա խորհուրդ է տալիս «թողնել մի կողմը իդէալական մտքերը»։

Ոչ, իդէալական մտքերը չէ, որ պիտի թողնել, այլ մեղկ, թուլամորթ թէորիաները։ Այդպէս քարոզել, ասել է, խրախուսել բարոյական անարխիան, ասել է իջնել մինչեւ կոպիտ ռէալիզմի, ամբոխային, ռամկական հասկացողութիւնների մակերոյթը։ Եւ ով որ տրամադիր է այդպէս քարոզելու, անգիտակից անկեղծութեամբ վկայում է իր մտաւոր ու բարոյական անանկութիւնը։

Մ. Յովհաննիսեան

Պարիզ.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Օգոստոսի 14-ին

Ներքին-Ագուլիսում, օգոստոսի 7-ին, վախճանվեց խորին ծերութեան մէջ Յակովբ քահանայ Տէր-Անդրէասեանը։ Հանգուցեալը պատկանում էր գիւղական համեստ գործիչների կարգին, որոնք լուռ ու առանց թմբկահարութեան աշխատում են խուլ անկիւններում։ Նրա տուած օգուտները Ն.-Ագուլիսին եւ շրջակայ գիւղերին անգնահատելի են, նրա մահը մեծ կորուստ է նրանց համար։

Նրա գործունէութեան էական մասը բժշկութիւնն էր, որ նա ուսումնասիրել էր ինքնօգնութեամբ, ունենալով ձեռքի տակ ամեն տեսակ բժշկական դրքեր եւ յարաբերութիւն ունենալով զանազան բժիշկների հետ։ Ունէր գիւղում նաեւ մի օրինաւոր դեղատուն։

Կէս դարուց աւելի շրջակայ ժողովուրդը օգտվել է նրանից, մանաւանդ, երբ դեռ եւս այդ կողմերում համալսարանական բժիշկներ չը կային։ Քանի՞ քանի՞ հարիւրաւոր երեխաներ է նա ազատել մահից, մանաւանդ դիֆտերիտի ժամանակ։ Խոլերայի տարին էլ մեծ էր նրա օգնութիւնը։ Դիմում էին նրան թէ թուրք, թէ հայ, թէ հարուստ եւ թէ աղքատ, որոնց նա օգնում էր առանց խտրութեան։ Ահա հէնց այս պատճառով էլ նա յարգված էր ու սիրված ամբողջ շրջակայքում։

Բացի բժշկութիւնից նա բաւական լաւ նկարիչ էր եւ ճարտարապետ։ Գիւղի եկեղեցիների պատկերները բոլորը հաստատեա նրա նկարածներն են։

Գիւղացիներից մէկը տուն չինելիս անպատճառ պէտք է դիմէր Տէր-Յակովբին եւ օգտվէր նրա խորհուրդներից։ Նրա կազմած յատակագծով է վերանորոգված այժմեան գիւղի մայր եկեղեցին, որը մի չատ գեղեցիկ եւ յարմար շինութիւն է դարձել։

Նրա գլխաւոր հոգսերից մէկն էր գիւղական ուսումնարանը, որի համար ամբողջ կէս դար աշխատել է։ Դա նրա սրտի ամենամօտիկ հաստատութիւնն էր։ Նա ջանք չէր խնայում ուսումնարանի բարեկարգութեան եւ յառաջադիմութեան համար։

Հանգուցեալը ունի անտիպ գրուածքներ, որոնք վերաբերում են Գողթան գաւառի պատմութեան, ժողովրդական նիստ ու կացին եւ առհասարակ պարունակում են մեծ քանակութեամբ էտնոգրաֆիական տեղեկութիւններ։

Տէր-Յակովբի մահով ներքին Ագուլիսը կորցրեց մի եռանդոտ, գործունեայ եւ անփոխարինելի հովիւ, մի իդեալական քահանայ։

Հանգիստ ոսկրներիդ, համեստ ու ազնիւ գործիչ։

Արամ Մակարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկրագործական մինիստրի կովկասեան լիազօրի նախաձեռնութեամբ, հրատարակված է կովկասեան գիւղատնտեսութեան մի հաստատուն նկարագրութիւն ֆրանսերէն լեզուով։ Այդ նկարագրութիւնը նպաստում է որոշ գաղափար կազմելու այն առարկաների մասին, որոնք հանդէս են դրված Պարիզի յուցահանդէսի կովկասեան բաժնում։

—

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ երկաթուղիներում յաճախ պատահում են հիւանդութեան դէպքեր, որոշված է երկաթուղային տեխնիկական բոլոր, թէ ստորին եւ թէ բարձրագոյն, դպրոցներում սովորեցնել բժշկական հիմնական գիտելիքներ՝ առաջին օգնութիւն հասցնելու նպատակով։

—

Պետական եւ մասնաւոր երկաթուղիների բոլոր բժիշկներին վճռված է տալ պետական ծառայութեան իրաւունքներ ընդհանուր հիմունքների վրա։

—

Թիֆլիսի մօտ գտնվող գերմանական Ալէքսանդրսդորֆ կոլոնիան մինչեւ այժմ չունէր հաղորդակցութեան լաւ ճանապարհ քաղաքի հետ։ Անձրեւային եղանակներին հաղորդակցութիւնը շատ դժուարանում էր եւ երբեմն նոյն իսկ ընդհատվում։ Այժմ շինվում է խճուղի, որ շուտով պատրաստ կը լինի եւ առաջիկայ ձմեռվայ համար կապահովէ կանոնաւոր հաղորդակցութիւնը։ Այդ խճուղու շնորհիւ կը բարւոքվի հաղորդակցութիւնը եւ Դիպուբէյում գտնվող հեռաւոր շինութիւնների եւ այգիների հետ։

—

Թիֆլիս քաղաքի շրջակայքում բուսաբանական արհեստական անտառը բաւական մեծացել է եւ յոյս է տալիս ապագայում ազդելու քաղաքի օդի մաքրութեան եւ բարեխառնութեան վրա, նաեւ ծառայելու իբրեւ զբօսատեղի։

—

Մեր թղթակիցը յայտնում է, որ «Մշակի» № 157-ում, Աբասթումանից հաղորդած նրա տեղեկութեան մէջ մի սխալ է սպրդել։ Լուրի մէջ ասված է, որ Գրիգոր Զանչանի համար կատարած հոգեհանգստից յետոյ ժողովվեց 175 րուբլի, մինչդեռ ժողովարարութիւնից գոյացել է միայն 50 րուբլի։

—

Նահանգապետներին տրվում է լիազօրութիւն, որ նրանք իրանց իշխանութեամբ թոյլատրեն չինելու մասնաւոր երկաթուղային գծեր, որոնք այս կամ այն կայարանները կը միացնեն տեղական կետերի կամ գործարանների հետ։ Մինչեւ այժմ նահանգապետները ուղարկում էին այդ տեսակ խնդիրները աւելի բարձր իշխանութեան՝ բարեհայեցողութեանը եւ այդ պատճառով երկաթուղային այդ գծերի չինութեան գործը զուր տեղ յետաձգվում էր։

—

Թէպէտեւ գիւղացիներին վերաբերեալ օրէնքների ընդհանուր վերաքննութիւնը դադարեցրած է, բայց եւ այնպէս յանձնաժողովի աշխատանքները այնպիսի ընդարձակ նիւթերուն, որ հնարաւորութիւն կայ այժմ մասնական փոփոխութիւններ մտցնելու գիւղացիներին վերաբերեալ այժմեան օրէնքների մէջ։

Զրադաշտ

(Մարդկանցից պէտք է առաջանան գերմարդիկ։ Մօտեցել է դրա ժամանակը։ Այժմ ապրում են վերջին մարդիկ, որոնք զուրկ են բարձր ձգտումներից,—մանրացած, ամեն բանում չափաւոր մարդիկ, որոնք աշխատում են միայն հանգիստ լինել, չը յոգնել)։

...Եւ Զրադաշտը դիմեց ժողովրդին այսպէս.

«Գալիս է ժամանակը, երբ մարդս հասնելու է իր նպատակին (գերմարդ առաջացնելուն)։

(Բայց դրանից առաջ աւելի վատ է լինելու, քան այժմ)։

...Աւաղ։ Մօտենում է ժամանակը ամենահրէշաւոր մարդու, որ այլ եւս անկարող կը լինի արհամարհել ինքն իրան (որ գոհ կը լինի իրանից եւ չի ուզի կատարելագործվել)։

Տեսէք։ Ես ձեզ ցոյց եմ տալիս վերջին մարդուն։

Ի՞նչ է սէրը։ Ի՞նչ է ստեղծագործութիւնը։ Ի՞նչ է փափագը։ Ի՞նչ է աստղը,—հարցնում է վերջին մարդը եւ անմիտ կերպով թարթում աչքերը։

Երկիրը դարձել է փոքրիկ մի բան եւ նրա վրա թռչկոտում է վերջին մարդը, որ ամեն ինչ մանրացնում է։ Նրա սերունդը անջնջելի է, ինչպէս հողային լուի սերունդը. վերջին մարդը ամենքից երկար է ապրում։

«Մենք գտել ենք մեր բաղդաւորութիւնը», ասում են վերջին մարդիկ եւ անմիտ կերպով թարթում աչքերը։

...Նրանք դեռ աշխատում են, որովհետեւ աշխատանքը զուարճութիւն է։ Բայց նրանք հոգս են տանում, որ զուարճութիւնը չը յոգնեցնէ նրանց։

Չի լինելու է այլ եւս ոչ հարուստ, ոչ աղքատ,—թէ մէկը, թէ միւսը չատ յոգնեցուցիչ են։ Ո՞վ է ցանկանում այլ եւս իշխել։ Ո՞վ հպատակվել։ Թէ մէկը, թէ միւսը չատ յոգնեցուցիչ են։

Չը կայ հովիւ, կայ միայն մի հօտ։ Ամեն մէկը հաւասարութիւն է ուզում, եւ հաւասար են ամենքը։ Ով ուրիշ տեսակ է զգում՝ պէտք է յօժարակամ գնայ գժանոց։

...Նրանք խմաստուն են եւ գիտեն բոլորը, ինչ որ պատահել է.—վերջ չը կայ նրանց ծիծաղին։ Դեռ կռւում են նրանք իրար հետ, բայց շուտով հաշտվում են,—այլապէս այդ կը խանգարէր նրանց ստամոքսը։

Նրանք ունեն իրանց փոքրիկ զուարճութիւնը ցերեկվայ համար եւ իրանց փոքրիկ զուարճութիւնը գիշերվայ համար, բայց նրանք յարգում են առողջութիւնը։

«Մենք գտել ենք մեր բաղդաւորութիւնը», ասում են վերջին մարդիկ եւ անմիտ կերպով թարթում աչքերը։

Այստեղ վերջացաւ Զրադաշտի առաջին քարոզը, որ կոչվում է նոյնպէս «Առաջարան». այդ խօսքերի վրա նրան ընդհատեցին ամբոխի աղաղակները եւ ծաղրը։ «Տուր մեզ այդ վերջին մարդուն, ով Զրադաշտ», ոռնում էր ամբոխը, «դարձրու մեզ այդ վերջին մարդկանց նման։ Մենք տալիս ենք քեզ քո գերմարդուն, (քեզ համար պահիր քո գերմարդուն)»։

VI

(Լարախաղացը մրցելով տակի խեղկատակի հետ, վայր է ընկնում։ Զրադաշտը մօտենում է նրան)։

Մեռնողը (լարախաղացը) ասաց նրան... «Ես չատ քիչ բարձր եմ անասունից, որին ծեծով ու քաղցով սովորեցրել են պարել»։

«Ոչ բոլորովին», ասաց Զրադաշտը,—«վտանգը դու կոչումն ես դարձրել քեզ համար, եւ այդ պատճառով չէ կարելի արհամարհել քեզ...»

VII

...Այն ժամանակ ասաց Զրադաշտը իր սրտում.

«Անապատան է մարդկային գոյութիւնը, եւ բացի այդ՝ նա զուրկ է իմաստից,—ինչպէս, օրինակ, լարատակի խեղկատակը։

Ես ուզում եմ սովորեցնել մարդկանց նրանց գոյութեան իմաստը,—այդ իմաստը գերմարդն է, եւ նա կայծակ է մռայլ ամպից»։

VIII

...Ինչ որ մի մարդ մօտեցաւ Զրադաշտին եւ ասեց ինչ որ չչնջալ նրա ականջին։ Խեղկատակն էր այդ։ «Հեռացիր այս քաղաքից, Զրադաշտ», ասում էր նա, «այստեղ չատ չատերն են ատում քեզ։ Ատում են քեզ բարիներն ու արդարները, եւ նրանք անուանում են քեզ իրանց թշնամի եւ ատող, ատում են քեզ ուղղահաւատները, եւ նրանք անուանում են քեզ վտանգաւոր մարդ ամբոխի համար։ Քո բաղդիցն է, որ նրանք ծիծաղում էին քո վրա...»։

IX

Երկար քնած էր (անտառում) Զրադաշտը եւ ոչ միայն արշալոյսը, այլ եւ միջօրէն անցաւ նրա երեսի վրայով։ Բայց, վերջապէս, նա բաց արեց աչքերը... եւ ահա ինչ ասաց նա այն ժամանակ իր սրտում.

«Լոյս ծագեց իմ մէջ.—թող Զրադաշտը խօսի ոչ ժողովրդին, այլ հետեւողներին։ Զրադաշտը չը պէտք է հովիւ եւ շուն լինի հօտի համար։

Փախցնել շատերին հօտից—ահա թէ ինչի համար եմ եկել ես։ Բարկանալու են իմ վրա ժողովուրդը եւ հօտը, աւազակ են անուանելու Զրադաշտին հովիւները։

Հովիւները—ասում եմ ես, բայց նրանք անուանում են իրանց բարի եւ արդար մարդիկ։ Հովիւները—ասում եմ ես, բայց նրանք անուանում են իրանց ուղղահաւատներ։

Նայեցէք բարիներին եւ արդարներին (եւ ուղղահաւատներին)։ Ո՞ւմ են ամենից չատ ատում նրանք։ Նրան, ով ջարդում է նրանց արժէքցոյց տախտակները (ուրիշ տեսակէտից կամ ուրիշ չափով է գնահատում վարժունքների բարոյական արժէքը), ով (նրանց ասելով) կործանող է եւ չարագործ,—բայց հէնց նա է է շինարարը։

...Իրան հետ շինարարներ է փնտռում շինարարը, որոնք նոր արժէքցոյցեր են գրում նոր տախտակների վրա։

...Ստեղծագործողների, հունձ հաւաքողների եւ ցնծացողների խմբին եմ ուզում միանալ ես,—ուզում եմ ցոյց տալ նրանց գերմարդու բոլոր աստիճանները եւ ծիծաղը։

Ես ուզում եմ երգել իմ երգը նրանց, որոնք մենակ են ապրում կամ երկուսով (ամբոխին չեն պատկանում), որոնք դեռ ականջ ունեն լսելու չը լսված բաներ, նրանց սրտերն եմ ուզում ծանրաբեռնել իմ երջանկութեամբ։

Ես ձգտում եմ իմ նպատակին. ես գնում եմ իմ ճանապարհով. ես կը յաղթեմ դանդաղկոտների եւ անհոգների վրայով։ Թող իմ ուղին կորուստ լինի նրանց համար»։

X

...Հարցական կերպով վեր նայեց Զրադաշտը, որովհետեւ թռչունի ճիչ լսեց վերեւից։ Այնտեղ արծիւը մեծ պտոյտներ էր գործում օդում, իսկ նրա վրա կախված էր օձը, բայց ոչ իբրեւ որս, այլ իբրեւ ընկեր.—նա օղակաձեւ փաթաթվել էր արծիւի վզից։

«Այդ իմ կենդանիներն են», ասաց Զրադաշտը եւ ցնծաց իր սրտում։

Ամենահպարտ կենդանին արեւի տակ եւ ամենախելօք կենդանին արեւի տակ—երկուսն էլ դուրս են եկել ինձ փնտռելու։

Նրանք ուզել են իմանալ, կենդանի է դեռ Զրադաշտը։

...Վտանգաւոր ճանապարհով է գնում Զրադաշտը։ Թող իմ կենդանիները ուղեցոյց լինեն ինձ...

(Ցետոյ) հառաչեց Զրադաշտը եւ այսպէս ասաց իր սրտում.

«Ես կուզէի լինել աւելի խորագէտ։ Ես կուզէի լինել բոլորովին խորագէտ, ինչպէս իմ օձը։

Անհնար բան եմ խնդրում ես.—խնդրում եմ, որ իմ հպարտութիւնը միշտ ձեռք ձեռքի տուած գնայ խորագիտութեանս հետ։

Իսկ եթէ խորագիտութիւնս թողնելու է ինձ,—օ, նա սիրում է հեռանալ,—թող այն ժամանակ հպարտութիւնս էլ չքանայ յիմարութեանս հետ»։

Այդպէս սկսվեց Զրադաշտի արեւամուտը։

(Պը շարունակվի)

առանց սպասելու ընդհանուր վերաքննութեան։ Այնինչ առաջ հերթական է դարձրած գիւղական հաւայնքների մէջ նոր անդամների ընդունելութեան հարցը, որովհետեւ վարչական աքսորանքի վերացման նոր օրէնքը հինգովին պէտք է փոփոխէ այդ մասին մինչեւ այժմ գոյութիւն ունեցող կարգերը։ Բացի դրանից այդ հարցը պէտք է համաձայնեցնել դասակարգերի վերակազմութեան վերաբերմամբ մշակված ծրագրի հետ, որով, ինչպէս յայտնի է, թոյլ է տրվում մեչչաններին գիւղական հաւայնքի անդամ դրվել։ Ապա պէտք է փոփոխութիւնների ենթարկվեն հասարակական խնամատարութեան կանոնները գիւղացիների մէջ»։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ «Жизнь Юга» շաբաթաթերթի առիթով կառավարչական սենատը բացատրել է, որ պարբերական թերթերի հրատարակիչները, հրատարակութեան իրաւունքը չը կորցնելու համար, պէտք է հրատարակեն տարվայ ընթացքում ամենաքիչը երեք համար։ Այդպիսով «Жизнь Юга» շաբաթաթերթը համարվում է դադարած, որովհետեւ 1897-ի յուլիսից մինչեւ 1898-ի յուլիսը, լոյս է տեսել միայն մի անգամ, 1898 թ-ի մայիսի 24-ին։ Այնուհետեւ շաբաթաթերթը չէ հրատարակվել, որովհետեւ տպագրական գործի գլխաւոր վարչութիւնը թոյլ չէ տուել, համարելով նրան դադարած 1898 թ-ի յունիսի 1-ից։ Հրատարակիչները դիմել էին կառավարչական սենատին, որ եւ նորերս տուեց վերոյիշեալ բացատրութիւնը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 13-ին, ս. Աստուածածնի տօնին, այստեղի մի քանի երիտասարդների նախաձեռնութեամբ, հոգեհանգիստ կատարվեց անմոռանալի Գրիգոր Զանչեանի յիշատակին, ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ։ Դամբանական խօսեցին՝ պատարագիչ Խ. ք. Միրզաբէկեան եւ Եղիշէ ք. Գեղամեան։ Ի դէպ, այստեղ բոլորովին անուշադրութեան է մատնված եկեղեցական երգեցողութիւնը։ Բագուն չէ կարողանում իր եկեղեցում պահել գոնէ մի այնպիսի համեստ երգեցիկ խումբ, որպիսին կարելի է գտնել հաւարեա ամեն մի գաւառական քաղաքում»։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Ամբողջ տարի է, որ տեղիս ս. Աստուածածին եկեղեցու երէցփոխի հարցը խճճված դրութեան մէջ է։ Փոխանորդ Գ. վարդապետ Յակոբեանի եւ երէցփոխ պ. Յ. Մանուկեանի յարաբերութիւնները խզված են եւ դրա շնորհիւ հոգեւոր գործերը մոռացութեան տուած, երեսի վրա են ընկած։ Տեղիս հոգեւոր կառավարութիւնը ամբողջ տարի է զուրկ է քարտուղարից։ Մի քահանայի գլխին բարձել են մի քանի պաշտօններ, որոնք խեղճին ամենեւին ժամանակ չեն տալիս ուրիշ խնդիրներով զբաղվելու»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 8-ին դերասանական խումբը ներկայացրեց այստեղ «Ննջարան—վագոնների կօնտրոլեօր» կոմեդիան, ի նպաստ պ. Արաքսեանի։ Պ. Խանդամիրեանի թատրօնը, ուր կայացաւ ներկայացումը, ծայրէ ծայր լի էր հասարակութեամբ։ Չենք կարող ցաւ չը յայտնել պիէսայի անաջող ընտրութեան եւ գների չափազանց թանգ նշանակելու մասին»։

—

ԳԵԴԱԲԷԿԻՑ մեզ գրում են. «Գրիգոր Զանչեանի մահը այստեղ էլ արձագանք գտաւ։ Օգոստոսի 13-ին, կիրակի օրը, հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց ի յիշատակ Գրիգոր Զանչեանի։ Ներկայ էին ժողովրդի մեծ բազմութիւն եւ Զարեքայ վանքի վանահայր Աստուածատուր վարդապետ։ Հոգեհանգստից յետոյ Շաւարշ քահանայ Բորեան դամբանական կարդաց»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 6-ին, պատարագից յետոյ, մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ, այստեղի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Գրիգոր Զանչեանի յիշատակին։ Երկու ուսանող եւ մի ուսուցիչ կարդացին դամբանականներ, որոնց մէջ բացատրեցին Զանչեանի գրական գործունէութիւնը եւ թիւրքահայ որբերի վերաբերմամբ ցոյց տուած խնամքը»։

—

ԶԱՔԱԼԱԼԱՑԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 6-ին դերասաններ՝ տիկ. Մէլիքեան եւ պ. Յարութիւնեան, մասնակցութեամբ տեղական սիրողների, բերդի ռուսաց բեմի վրա ներկայացրին առաջին անգամ Զաքաթալայում Խ. Գալֆայեանի «Արշակ II» պատմական ողբերգութիւնը եւ «Մկնիկ» վոդեվիլը։ Ներկայացումը անցաւ շատ աջող թէ խաղի եւ թ մուտքի կողմից։ Շատ լաւ էին պ. Յարութիւնեան «Արշակի» եւ տիկին Մէլիքեան «Միհրանի» դերերում։ Սիրողները՝ բոլորն էլ լաւ էին սովորել իրանց դերերը եւ նրանցից ամեն մէկը իր տեղումն էր։ Զուտ արդիւնք մնաց մօտ 100 ռուբլի։ Թատրօնի դահլիճը ծայրէ ի ծայր լի էր։ Ներկայացումից երկու օր առաջ տոմսակները բոլորովին սպառված էին եւ շատերը մնացին առանց տոմսակի։ Ժողովրդից շատերը խնդրեցին տալ երկրորդ ներկայացում, բայց ժամանակի սղութեան պատճառով դերասանները չը կարողացան սպասել եւ ամսոյ 8-ին ճանապարհվեցին Նուխի՝ այնտեղ եւս ներկայացումներ տալու։ Շնորհակալութեան արժանի են տեղիս պ. դաւառապետը, որ ձրիաբար զիջեց բերդի բեմը եւ Սղնախից յատկապէս ներկայացմանը մասնակցելու համար եկած՝ այնտեղի քաղաքային աւագի պաշտօնակատար պ. Վ. Ենիկոլօպեան, որ սիրողների մէջ աչքի էր ընկնում իր աջող խաղով Շապուհի եւ Անանուզանի դերերում»։

—

Զիբրայէլի գաւառի ԱՌԱՔԵԼ գիւղից մեզ գրում են. «Մի քանի օր առաջ Խուրմանչուղ գիւղում, երկար հիւանդութիւնից յետոյ, մեռնում է մի կին։ Ազգականները հաղցնում են նրան ոսկէ զարդերը վերջին անգամ։ Տեղի սովորութեան համաձայն, լաւ ձայն ունեցող թուրք կանայք են հրաւիրում, որ սգան հանգուցեալի վրա։ Թաղումից յետոյ այդ լալկան թուրք կիները գնում են իրանց գիւղը եւ գովում հանգուցեալի զարդերը, իրանցից աւելացնելով, թէ բոլոր զարդերն էլ թաղել են մեռելի հետ։ Մի երկու օր անցնելուց յետոյ, մի գիշեր, ինչպէս ասում են, 7—9 թուրքեր գնում քանդում են գերեզմանը, հանում են կնոջ մարմինը եւ ոչինչ չեն գտնում։ Գործը գաւառապետի մօտ է։ Խիստ որոնում են յանցաւորներին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

«Berliner Tageblatt» լրագրին հեռագրում են Լօնդօնից, թէ միացեալ զորքերի դրութիւնը Պեկինում երկիւղալի է։ Կատաղի կռիւները փողոցներում շարունակվում են։ Իրերի դրութիւնը աւելի ես վատացաւ այն պատճառով, որ Անգլիան նորից սկսեց իր ինտրիգները Գերմանիայի դէմ։ Եապօնիայի հետ միացած՝ Անգլիան այժմ գործում է հակառակ Գերմանիայի։ Նա եռանդով գրգռում է եապօնացիների թերահաւատութիւնը դէպի Գերմանիայի չինական ծրագիրները։ Եապօնական լրագիրները ասում են, թէ որովհետեւ Եապօնիան գլխաւոր դերը կատարեց չինական ներկայ անցքերի ժամանակ, ուստի եւ նա չէ կարող թոյլ տալ, որ նրան զոհ բերեն եւրոպական պետութիւնների շահերին։ «Եապօնիան—ասում է մի եապօնական կիսապաշտօնական լրագիր—չէ կարող թոյլ տալ, որ բաժան-բաժան անեն Չինաստանը, մի երկիր, որի հետ մենք կամենում ենք պահպանել լաւ յարաբերութիւններ եւ որին չենք կարող զոհել մի խումբ յեղափոխականների պատճառով»։

«Times» եւ «Daily Express» հեռագիրներ են ստացել Հօնգկոնգից, որոնցով հաղորդվում է, թէ ամերիկացիները Չինաստանի հարաւային նահանգներում ամեն տեղ յայտարարութիւններ են կպցրել, եւ նրանց մէջ հաղորդելով Պեկինի գրաւման մասին օտարերկրեայ պետութիւնների զօրքերից, անուանում են այդ հանգամանքը բոլորովին իրաւացի պատիժ չինական իշխանութիւններին, որոնք զլորեցին պետութիւնը երկպառակութիւնների անդունդը։ Ապա ամերիկացիները այդ յայտարարութիւնների մէջ յոյս են յայտնում, որ անկարգութիւնների սկզբնապատճառ յանցաւորներին պատժելուց յետոյ՝ կը տիրէ խաղաղութիւն։ Մի եւ նոյն ժամանակ փոխարքաները պահանջում են ազգաբնակութիւնից, որ նա թշնամական ցոյցեր չանէ օտարազգիների դէմ։

«Temps» լրագիրը համեմատելով իրար հետ Վիլհէլմ կայսրի եւ Դէլկասէյի ճառերը՝ գալիս է այն եզրակացութեան, որ չինական հարցում Ֆրանսիան, Ռուսաստանը եւ Գերմանիան կապված են միմեանց հետ շահերի համերաշխութեամբ, քաղաքական ծրագրի նոյնութեամբ եւ ընդհանուր յոյսով, որ չինական արշաւանքը, վերջ ի վերջոյ, կամրապնդէ եւրոպական խաղաղութիւնը։

Չինական արշաւանքի պատճառով Գերմանիայի եւ Ֆրանսիայի յարաբերութիւնները աւելի ուրախ բնաւորութիւն ստացան։ «Kölniche Zeitung» ժամանացոյց է անում այն փաստը, որ Գերմանիայի շատ տեղերում վճռված է այս տարի չը ծօնել Սեդանի յաղթութեան տարեդարձը։ Վճռի շարժառիթը այն է, որ անյարմար է համարվում յաղթանակի տարեդարձ ծօնել այնպիսի ժամանակ, երբ գերմանական եւ ֆրանսիական զօրքերը միասին արիւն են թափում Չինաստանում մի ընդհանուր գործի համար։ «Koln. Zeit.» արդարացի է գտնում այդ վարմունքը եւ ցոյց է տալիս ֆրանսա-գերմանական մերձեցման եւ այլ նշաններ, ի միջի այլոց, Գերմանիային ցոյց տուած ուշադրութիւնը Պարիզի ցուցահանդէսում։ Նոյն տեսակ փաստի վրա ժամանիշ է անում եւ ֆրանսիական մամուլը։

«Այս տարի—ասում է «Temps»—գերմանացիները աւելի համեստ են ծօնում 1870 թ-ի յաղթութիւնների տարեդարձը, քան նախորդ տարիներում։ Այսպէս, օրինակ, Մեցի մօտ կատարված ծօնախմբութիւնների ժամանակ՝ բացակայ էին բոլոր զինուորական ընկերութիւնները (Kreigs Vereine)։ Միայն 1870 թ-ի մի քանի հազար վետերաններ իրանց հաշուով եկան Մեց, չը ջնջեցին պատերազմական դաշտերը Բեզինվիլի, Վիոնվիլի եւ Գրաւելոտի մօտ։ Միակ ծօնախմբութիւնը կատարվեց այս տարի Գրաւելոտի մօտ, բայց այնտեղ էլ թէ քաղաքացիական իշխանութիւնները եւ թէ զինուորական վարչութիւնը ներկայացուցիչներ չունէին։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Զուղա, յուլիսի 17/30-ին

Ինչպէս լսում ենք, Նուիրակ հայր Յակոբ-Ջանեան, Ռանգունում եւ Մանդլէյում 2500 ռուփի հանգանակելով ի նպաստ օրիորդաց դպրոցի եւ հոգեւոր դպրանոցի, Կալկաթա է գնացել, բայց ցաւօք սրտի տեղեկանում ենք, որ նոյն քաղաքում հանգանակութեան գործը շատ դանդաղ է ընթանում՝ նոյն տեղի մեր ազգայինների վերին ասոիճանի անտարբերութեան, Հնդկաստանի այժմեան սովի ու ժանտախտի եւ մի քանի վատասիրտ անձինքների մեքենայութիւնների շնորհիւ։ Տեղական հռչակաւոր Արգարեանց տունը մերժել է նպաստ գրվելու, առարկելով, թէ Զուղայից իրենց գրել են, որ այնտեղի ուսումնարաններում գրաբար լեզուն չէ աւանդվում (իրենց նոր սերունդը եւ ոչ մի բառ հայերէն չէ իմանում. երանի, թէ այդ տված աշխարհաբարն անգամ իմանում լինէին)։ Պէտք է ասել, որ այդ սխալ է, քանի որ բարձրագոյն երկու դասարաններում աւանդվում է գրաբարը։ Բանից դուրս է գալիս, որ մի քանի սեւահոգի անձինք, որոնք սկզբից ես հակառակ էին նուիրակութեան գործին, այստեղից սուտ լուրեր են գրում Կալկաթա, որպէս զի միամիտների մտքերը պղտորեն եւ գործին վնաս հասցնեն։ Զարմանում ենք, որ Արգարեանները այդքան կարեւորութիւն են տուել այդ չինծու լուրերին եւ հրաժարվել են մասնակցելու մի այդպիսի նուիրական գործի։ Լսում ենք, որ ոչ պակաս դեր է խաղացել Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի «Խալֆայ-Թաթոսը»՝ (Թադէոս Տէր-Ստեփաննոսեան վարժապետը) հանգանակութեան գործին եւ հետեւաբար տեղիս երկսեռ ուսումնարաններին վնասելու գործերի մէջ։ Այդ պարոնը, որ անցեալ 20 տարիների ընթացքում մի խումբ օտարացած աշակերտներ դուրս զրկելուց աւելի ուրիշ ոչինչ չունի արած, գիւղացի տգէտ քահանայի նման, իր գիրքն եւ համարումը պահպանելու համար՝ ասպարէզ է դուրս գալիս, որպէս գրաբարի ախոյան (թէեւ խեղճը հայկաբան լինելուց շատ հեռու է) եւ պղտորում է միամիտների սրտերը։ Մենք լաւ գիտենք, որ իր այս բոլոր արածները ոչինչ չեն, եթէ ոչ հեռանք այն յանդիմանութիւնների, որոնց ինքը իրաւամբ եւ յաճախ արժանացել է շատերի կողմից՝ ճեմարանն աննախանձելի դրութեան մէջ ձգելուն համար, որի պատճառով հայ քահանաներն անգամ ստիպվում են իրենց տղաներին եւրոպացիների դպրոց տալ։ Մենք հաստատ աղբիւրից տեղեկացել ենք, որ, երբ Կալկաթայի եկեղեցու կառավարիչները տեղիս ուսումնարանների ծրագիրները տեսնում են, յայտարարում են, թէ նոյնպիսի մի ծրագրի կարօտ է նաեւ Մարդասիրական ճեմարանը։ Թադէոս Տէր-Ստեփաննոսեան վարժապետը ծանօթ է եւ «Մշակի» ընթերցողներին, քանի որ մի քանի ամիսներ առաջ քննադատութեան ենթարկվեց իր մի անճոռնի թարգմանութեան առիթով։

Պարոն եւ տիկին Պապեան, տեղիս հոգաբարձութեան հրաւիրած ուսուցիչն եւ ուսուցչուհին, անցեալ շաբաթ այստեղ հասան. արանք 3 տարի Թէհրանում են եղած ուսուցչութեան պաշտօնով եւ, ինչքան լսել ենք, բաւականութիւն են տուած նոյն տեղի հասարակութեան. յոյս ունենք, որ այստեղ եւս իրենց պաշտօնավարութիւնը եռանդուն, արդիւնաւոր եւ երկարատեւ պիտի լինի։

Մեր առաջնորդն անցեալ ուրբաթ օր տեղիս առաջնորդական խորհրդարանի անդամներին, երկսեռ ուսումնարանների հոգաբարձութեան եւ Զիգան գիւղի յանձնաժողովի անդամներին իւր մօտ ժողովի հրաւիրելով յայտնեց, որ Զիգան գիւղի խնդիրը օրէ օր վատթարանում է եւ ինքը ժամանակին յայտնել է Վեհափառ Կաթողիկոսին, որ եթէ խնդիրը անաջողութեան մատնվի, ինքը այլ եւս այստեղ չէ կարող գործել եւ վերջերս եւս Զիլլէ Սոլթան նահանգապետին գրել է, որ եթէ այս խնդիրը աջող եւ վերջնական լուծումն չը ստանայ, ինքը պարտաւորեալ պիտի հրաժարի իւր պաշտօնից եւ մեկնի այստեղից. ի վերջոյ աւելացրեց, որ եթէ ժողովականները իրեն հաւանութիւն տան կամ չը տան, ինքը վճռած է այստեղից մեկնել մի ամսից յետ եւ Թէհրանում սպասել Վեհափառ Շահի վերադարձին եւ Վեհափառ Կաթողիկոսի պատասխանին։ Եթէ Վեհափառ Շահին ներկայացվելիք աղերսագրից յետոյ եւս խնդիրը բաւարար լուծումն չը ստանայ եւ Վեհափառ Կաթողիկոսից եւս յուսալից պատասխան չը ստանայ, այլ եւս Զուղա չի վերադառնայ, այլ կը մեկնի դէպի Էջմիածին։ Ինչքան իմացել ենք, առաջնորդարանի անդամները, հոգաբարձութիւնը եւ ժողովուրդը առհասարակ ընդդէմ են առաջնորդի այս քայլին, առարկելով, թէ ինչպէս կարելի է, որ իւր ձեռնարկած գործերը կիսակատար թողնի եւ այստեղից հեռանայ։ Օրիորդաց ուսումնարանի չէնքը դեռ չէ աւարտված եւ իւր կարգած նուիրակը դեռ Կալկաթա է։ Բայի այդ՝ կան նաեւ հազար ու մի տեսակ ուրիշ խնդիրներ։ Զարմանում ենք, որ մեր առաջնորդը, այս բոլորը իմանալով հանդերձ, այսպիսի մի ճգնաժամում մտածում է հրաժարվել եւ ասպարիզից հեռանալ։ Մեր հոգեւոր բարձրագոյն վարչութեան գիտութեան համար յայտնում ենք, որ մեր առաջնորդի հրաժարվելը եւ նոր փոխանորդի ընտրվելը առ նուազն 1000 թուման կը նստի մեր առաջնորդարանի աղքատ գանձարանի վրա։

Ինչպէս լսում ենք, մեր երկսեռ ուսումնարանների վերջին վեցամսեայ քննութիւնները անցել են աջող։ Հոգաբարձութիւնը, ասում են, մտադիր է պարգեւաբաշխութեան հանդէսը նորակառոյց օրիորդաց ուսումնարանում սարքել։

Նոր-Զուղայեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ռումինիայի եւ Բոլգարիայի յարաբերութիւնները, ըստ երեւոյթին, սուր կերպարանք են ստանում։ «Agence Roumaine» հաղորդում է, թէ մօտ օրերումս Բուխարէստում կայացաւ մի հակայական հակաբոլգարական ցոյց, որին մասնակցում էին 20—30,000 հոգի ազգաբնակութեան զանազան դասակարգերից. ի միջի այլոց, մասնակցում էին եւ արհեստաւորները իրանց դրօշակներով։ Բոլոր տները այն փողոցներում, որոնցով անցնում էին ցոյց անողները, եւ բոլոր քաղաքական կլուբները, առանց ուղղութեան զանազանութեան, զարդարված էին ազգային սգապատ դրօշակներով։ Ցոյցից յետոյ տեղի ունեցան երկու միտինգ, որտեղ արտասանվեցին հայրենասիրական ճառեր։ Երկու միտինգում եւս միաձայն ընդունվեցին վճիռներ, որոնցով դատապարտվում է բոլգարների վարմունքը, հաւանութիւն է յայտնվում կառավարութեան եռանդուն քաղաքականութեան եւ հրաւիրվում է վերջինս չը զիջանել բոլորովին, այլ դարձնել Եւրոպայի ուշադրութիւնը Բոլգարիայի գաղտնի նենգութիւնների վրա, որոնց նպատակն է խանգարել Արեւելքի խաղաղութիւնը։ Միտինգից յետոյ ցոյց անողները դիմեցին դէպի արքայական պալատը, որտեղ պատգամաւոր Իլեսկո մի ճառ արտասանեց։ Միւս կողմից բոլգարական մամուլը խիստ լեզուով դատապարտում է ռումինական լրագիրների ուժգնամտութեան անարգար վերաբերմունքը դէպի Բոլգարիան եւ հերքում է այն մեղադրանքները, որոնք ուղղված են բոլգարական կառավարութեան եւ ժողովրդի դէմ Միխայլէանոյի սպանութեան առիթով։ Պաշտօնական «Народни Права» ասում է, թէ Միխայլէանոյի սպանութեան առիթով բարձրացրած աղմուկի նպատակն է հեռացնել Եւրոպայի ուշադրութիւնը այն ճնշումներից, որոնց ենթարկվում են հրէաները Ռումինիայում։ Յամենայն դէպս, բոլգարները պաշտպանում են այն տեսակէտը, որ Ռումինիայում կատարված քաղաքական սպանութիւնների պատասխանատուութիւնը ընկնում է միայն մասնաւոր անձերի եւ ոչ ամբողջ մակեդոնական յանձնաժողովի վրա։

—Վիէննայի լրագիրները հաղորդում են, թէ Բոսնիայից եւ Հերցեգովինայից սկսվել է մահմեդականների եւ քրիստոնեաների խմբական գաղթականութիւն դէպի Սերբիա եւ Կրօացիա։ Այդ գաղթականութեան պատճառը բացատրում են ֆրանցիսկեան աբեղաների գործունէութեամբ, որոնք ահագին բազմութեամբ տարածվել են այդ երկիրներում եւ ամէն տեսակ բռնի միջոցներով աշխատում են կաթոլիկ դարձնել բնակիչներին։

—Թէ ինչպիսի ծանր նիւթական զոհեր են տալիս Միացեալ-Նահանգները իմպերիալիզմի գաղափարին—այդ պարզապէս երեւում է զինուորական մինիստրութեան առաջիկայ տարվայ բիւդժէից։ Ծախսերը զօրքի պահպանութեան համար, 1900—1901 թուականի ընթացքում, հաշուած են 112 միլիոն դոլլար, այն ինչ նոյն ծախսերը 1895—96 թուականների ընթացքում եղել են միայն 23 միլիոն դոլլար։ Անկասկած է, որ այդ ծախսերը կաւելանան ապագայում, որովհետեւ Միացեալ-Նահանգները ի նկատի ունեն մեծ փոփոխութիւնների ենթարկել զինուորական գործը։ Բայց զինուորական բիւդժէտը այդ թիւը չէ պարունակում միայն իր մէջ. այնտեղ կայ նաեւ մի անհաւատալի մեծ թիւ—145 միլիոն դոլլար, որ վճարվում է որպէս կենսաթոշակ նախկին զինուորներին։ Այսպիսով ամերիկական զինուորական բիւդժէտը երկու անգամ աւելի է աշխարհիս ամենամեծ զինուորական պետութիւնների—Ռուսաստանի եւ Գերմանիայի—համապատասխան բիւդժէներից, որովհետեւ Գերմանիայի զինուորական բիւդժէտը հասնում է միայն 141 միլիոն դոլլարի, իսկ Ռուսաստանինը—148 միլիոն դոլլարի։

—«Россія» լրագրին հեռագրում են Լոնդոնից. «Շանղհայի հիւպատոսները վախենում են, թէ չինացիները կենտրոնանում են Պեկինի մօտ, դաշնակից զօրքի եռեւին, այնպէս որ կարող են կտրել հաղորդակցութեան գիծը»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա եւ Թագաժառանգը Պետերհոֆից ժամանեցին Պետերբուրգ, որտեղ այցելելով ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր III Կայսրի գերեզմանը, նորից վերադարձան Պետերհոֆ։

ՊԱՐԻԶ։ Օգոստոսի 11-ին Տակուում ափ են հանված 2,000 ֆրանսիական զինուորներ։

ԿԱՊՇՏԱԴ։ Կռիւը շարունակվում է Բելգիատ—Դալմանուտի շրջականերում։ Բուլլէր վերցրեց Բերգենդալ, որ մի ամուր դիրք է Դալմանուտի հիւսիս-արեւմտեան կողմում։

ԼՕՆԴՕՆ։ Օգոստոսի 14-ին հաղորդում են Պրետորիայից, թէ, լուրերին նայելով, գենեռալ Բոտայի հետ ունեցած կռուում թշնամու գիծը պատռված է։ Թշնամին նահանջեց. անդլիացիների կորուստը մեծ է։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Միացեալ Նահանգները չեն դիմել ոչ մի պետութեան եւ չեն հրաւիրել կօնֆերենցիայի՝ քննելու համար այն կարգերը, որոնք պէտք է մտցնվեն Չինաստանում եւ չեն ստացել այսպիսի հրաւէր ոչ մի պետութեան կողմից։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Եապօնական գեներալ Գոտո եկաւ Ամոյ իր շտաբի հետ Ֆորմոզայից։ Եապօնական զօրքերը պահպանում են օտարերկրացիների գաղութները. թնդանօթները դրված են այնպիսի դիրքերի վրա, որոնք տիրում են քաղաքին։ Չինացիները հեռանում են քաղաքից։

ԼՕՆԴՕՆ։ Գլազգոյում պատահած ժանտախտի դէպքի վերաբերմամբ հաղորդում են, թէ դրութիւնն աւելի լուրջ է, քան ենթադրվում էր։ Ցայտնված է ժանտախտից հիւանդանալու էլի մի դէպք։ Երկու հոգի մեռել են այդ հիւանդութիւնից։ Քառասուն ընտանիք առանձնացրած են եւ գտնվում են բժիշկների հսկողութեան տակ։

ԼՕՆԴՕՆ։ Բօքերաս հեռագրում է Բելֆաստից, օգոստոսի 14-ից. «Մեր շարժումները դանդաղ են կատարվում՝ ռազմական գծի չափազանց երկարութեան եւ ճանապարհների դժուարութեան պատճառով, այնու ամենայնիւ մենք ունեցանք բաւարար աջողութիւն։ Բուլլէրի զօրքերը դրաւեցին Բերգենդալ, մի շատ զօրեղ դիրք Դալմանուտի հիւսիս-արեւմտեան կողմում։ Ես Բուլլէրին թողի Բերգենդալի մօտ. յոյս ունեմ, որ մեր կորուստները 30 հոգուց աւելի չեն. այս կորուստները քիչ են, քան կարելի էր սպասել, որովհետեւ դէպի դիրքը գնալու համար հարկաւոր էր անցնել բաց դաշտով երկու-երեք հազար եարդ տարածութեան վրա։ Թշնամին կռվում էր քաջաբար. շատ բօէրներ ընկան կռի մէջ, մանաւանդ բլրի վրա գտնվածները. նրանք սպանվեցին լիդիտի ռումբերով։ Առնված է մի միտրալեզ։ Բուլլէր զեկավարում էր կռիւը մեծ վարպետութեամբ։ Բենդլ հաղորդում է, թէ երէկ, Բէլֆաստի մօտ, հետախուզութեան ժամանակ սպանվեց մի օֆիցեր եւ մէկն էլ վիրաւորվեց. մեր ձեռքն ընկաւ 700 գլուխ տաւար։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Կանտոնում խաղաղութիւն է տիրում։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Ա. Կ. Ձեր գեղեցիկ յօդուածը անկարող եղանք տպագրել։

ԱԽԱԼՔԱԼԱՔ, հայ-կաթոլիկաց ասադ քահանայ Միքայէլ Վարձիլաշվիլի։ Ձեր պատասխանը կը տպագրենք անփոփոխ։ Առ այժմ կուզենայինք փարատել ձեր մի կասկածը։ Դուք գրում էք. «Կարծեօք օրէնքի համաձայն ո և իցէ խմբագիր իրաւունք չունի օտար քահանայի մը վրայ բան մը տպելու։ Այդպիսի օրէնք միայն ձեր երեւակայութեան մէջ գոյութիւն ունի։ Օտարութիւնը, որի տակ դուք պաշտպանութիւն էք որոնում, դեռ փրկութիւն չէ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բաղուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »

№ 6 գնացքը։		№ 4 գնացքը։	
Բաթումից դուրս է գալիս առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	7 » 18 »	»	10 » 05 »
Բաղու է հասնում ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 » 41 »
Բաթումից դուրս է գալիս. . . .	գիշ.	11 » 18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 » 30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	9 ժ. —
Ալէքսանդրապոլ հասնում է . . .	առ.	7 » 46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 » 56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 » 29 »
Ալէքսանդրապոլից դուրս է գալիս .	երեկ.	8 » 35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 » 15 »

ԱՒԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պroտասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պroտասեվիչ—6—7 ժ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԴՊՐՈՑ
տիկ. Կատ. Լիսիցեանցի

երկու սեռի մանուկների համար։ Միասնել պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (նախկին Սադովայա), սեփ. տ. № 29)։ (Ե.) 13—25

ԱՐԻՈՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՂԻԱԿՆԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ.

ԳԻՆՆ Է 1 Ր.

Թիֆլիսում դիմել—Կենտրոնական եւ Զաք. Գրիգորեանցի գրավաճառանոցներին, Նոյնպէս եւ Աղէքսանդր Ստեփանեանցին (Զուբալովի քարվանսարայում)։ (Ե. հ. չ.) 3—10

Բարձրագոյն ուսումն Ռուսաստանում աւարտած, միջնակարգ դպրոցում դասատուութեանը փորձված մի հայ երիտասարդ ցանկանում է ուսուցանել հայոց թեմական դպրոցներից մէկում կամ ձեմարանում։ Հասցէն. Թիֆլիս, Սուդէյնայա, № 25, Ալդաղանովի տուն, բնակարան Михаила Аствацатурова.
(չ. Ե. հ.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանի աշխատասիրութեամբ.

I. Առաջին գրքոյկ, պատրաստականների համար. „ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ“։ Գ. տպագր. Գինը 20 կոպէկ։

II. Երկրորդ գրքոյկ, Առաջին դասարանի համար. “ՀԻՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ“։ (Նոր հրատարակութիւն)։ Գինը 30 կ.։ (Ե. հ. չ.) 1—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եռաշխատորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱԳՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1900 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ 17—30

Ա. Փրիդօնեան եւ Ընկ. բանկային գրասենեակը

Ապահովացնում է ներքին փոխառութեան վիճակախաղի տոմսերը ցնոր անօրէնութիւն.

I	կարգի	ամեն մէկ	տոմսը 1901	թ. յունվարի	2-ից 2 ր. 10 կ.։
II	»	» »	» 1900	» սեպտեմբերի	1-ից 2 » 25 »
III	»	» »	» 1900	» նոյեմբերի	1-ից 1 » 60 »

Բացի 15 կոպէկ մարկան, որ առնվում է ամեն մէկ անդորրագրից։

Գրասենեակը ապահովացումն հեռագրով եւ վերադիր վճարումով չէ ընդունում։ (չ. Ե. չ.) 2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS V. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 16/29 օգոստոսի ՍԻՐԿԱՌԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԿ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տեղական պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անատոլիայի միջեւ, մտնելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Ն. Գ. Բարսեղեանցին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նարէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի № 27։ ՆՈՎՈՐՕՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առևտրական գործակալութիւն։ Ե. [illegible] 20—20

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 5) Торговыя и вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 15—20

За успѣшныя занятія благодарности.

Преподав. ведется по собств. сочиненіямъ.

Годъ занятій одиннадцатый.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՄՆԻՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Ասանդելի առարկայք որոնք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հատրիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և տուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերի հիմնադրի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնադրի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 15—25

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Августа 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.